

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պուշկարիոյ համար տարեկան 12 ֆրանկ
» » վեցամսեայ 6 »
Արտատպարանի » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՆԷԼԻ

Նամակ դրամ եռայլն դրկել հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՎԱՐՆԱ (ՊՈԼԿԱՐԻԱ)
Редакция на ВѢСТНИКЪ
„Ирaвyнкъ“
ВАРНА (България).
Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն դրկուիր եւ յարմար դասուած
ներք միայն կը հրատարակուին անորոշ
ընթացի կամ մասամբ:
Ծանուցման տողը 20 սանթիմ. երե-
փեկ սանթիմ. անգամներու համար 20 0/0
գեղջ կը լինի, փոխարեւը կանխիկ:

ՈՒՍՈՒՅՑԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԻ ԺՈՂՈՎ

Մեր մէջ այժմ ընդհանրացած է
սա գաղափարը թէ անհրաժեշտ
հարկաւոր է ուժեղ զարկ մը տալ
կրթական գործին, նոր սերունդ
մը պատրաստելու համար որ օժ-
տուած ըլլայ ժամանակին պա-
հանջներուն համապատասխան բա-
րեմանութիւններով եւ նկարագրով:
Ամեն ոք այսպէս կը խորհի, այն-
պէս որ այս միակ հարցն է որ
իրարու համախոհ կերեւան ամե-
նէն կարմիր ակտատականէն մինչեւ
ամենէն խիստ պահպանողականը:
Շատ ուրախալի է ինքնին այս
ընդհանուր համախոհութիւնը: Ու-
րախալի է նոյնպէս որ պուլկարա-
հայ դպրոցները մէկ երկու տա-
րիէ ի վեր առհասարակ զգալի
բարեփոխութեան մը ենթարկուե-
ցան, աւելի կարող ուսուցիչներու
խնամքին յանձնուելով: Այսքանը
սակայն բաւական չէ, քանի որ
կրթական գործին կանոնաւոր եւ
հիմնական առաջնութեան հա-
մար էական ինչ ինչ պայմաններ
կը պակսին, որոնցմէ մէկն է ուս-
ման միօրինակ ծրագիր մը, ընդ-
հանուր որոշ ուղղութիւն մը բո-
լոր պուլկարահայ վարժարաննե-
րուն համար:

Զորչափ այս պայմանը կը պակ-
սի, ցորչափ ամեն մի ուսուցիչ ա-
զատ կը մնայ իր գիտցածին պէս
վարելու իրեն յանձնուած կրթա-
կան հաստատութիւնը, ոչ միայն
բնականաբար մեր դպրոցները ի-
րարմէ քիչ կամ շատ տարբեր ծը-
րագիրներ եւ ուղղութիւն պիտի
ունենան, այլ եւ միեւնոյն դպրոցը,
ուսուցիչներու փոփոխութեամբ,
յաճախ ծրագիր եւ ուղղութիւն փո-
խելու ամենամեծ անպատեհութե-
նէն զերծ չի պիտի մնայ: Ասոր
փաստները այնքան յայտնի են որ
պէտք չի կայ զանոնք բացատրե-
լու:

Միօրինակ ծրագիր մը կազմե-
լու պէտքին մասին ուրիշ անգամ
գրուած է արդէն այս սրահակնե-
րուն մէջ եւ փափաք յայտնուած
որ հոգաբարձութիւնները իրենց
ներկայացուցիչները զրկեն որոշ-
ուած քաղաք մը, հոն ժողով մը

կազմելով խնդրոյն վրայ խորհըր-
դակցելու եւ բաղձացուած արդիւն-
քին յանգելու համար: Սակայն ոչ
մէկ հոգաբարձութիւն ցարդ յանձն
առաւ այնքան կարեւոր գործի մը
նախաձեռնութիւնը: Գիտ շատ
տարիներ ալ կրնանք զուր սպա-
սել, եթէ շարունակենք պաշտօ-
նական մարմիններէ այս մասին
գործունէութիւն մը ակնկալել:

Այս պատճառով շատ գոհ մը-
նացի երբ Ռուսոմուքի մէջ ինձ
կարծիք յայտնուեցաւ թէ նոյն
իսկ մեր ուսուցիչները կարող են
եւ պարտական սրոշեալ տեղ մը
հաւաքուիլ ու իրենց խորհրդակ-
ցութեան առարկայ ընել խնդիրը:

Այս եղանակը շատ աւելի գործ-
նական կերեւայ: Ոչ մի արգելք
կայ ուսուցիչներուն համար իրա-
րու հետ կանխաւ բանակցելէ եւ
հաւաքման վայրն ու ժամանակը
որոշելէ ետքը, ուսուցչական ընդ-
հանուր ժողով մը կազմելու եւ
խնդրոյն գոհացուցիչ լուծում մը
տալու լուրջ խորհրդակցութիւնե-
րով ու խղճամիտ ջանքերով:

Այսպիսի ձեռնարկ մը, վստահ
եմ թէ ընդհանուր հաւանութեան
պիտի արժանանար ժողովուրդին
կողմէն եւ պիտի ծառայէր ուսուց-
չական մարմնոյն ժողովրդականու-
թիւնը աւելցնելու, երբ մանա-
ւանդ ուսուցչական ժողովին հրա-
պարակային նիստերուն մէջ տես-
նուէր որ հայ մանկութեան Մեն
տորները, իրենց բարձր կոչումին
գիտակից, կրթական գործին օգ-
տակարապէս ծառայելու փափա-
քէն միայն առաջնորդուած, վի-
ճաբանութեանց մէջ զիրար լուսա-
ւորել միայն կը ջնան եւ վերջա-
պէս իրենց նպատակին կը հաս-
նին, ժողովէն հեռի պահելով այն
ցաւալի անպատեհութիւնները, ո-
րոնք ընդհանրապէս մեր մէջ կըն-
կերանան նմանօրինակ գումարում-
ներու եւ միշտ գործ կաւրեն, ո-
րովհետեւ նպատակին հետ ուղղա-
կի առնչութիւն չունեցող զանա-
զան նկատումներէ կը բխեն իս-
կապէս:

Կերեւակայեմ ուսուցչական ժո-
ղովը տիպար հայկական գումա-
րում մը ուր որոշուած դպրոցա-

կան ծրագիր եւ ուղղութիւն ան-
տարակոյս ամեն հոգաբարձու-
թիւն պիտի ընդունի ու վաւե-
րացնէ յօժարակամ:

ՌՈՒՍ ՄԱՄՈՒԼԸ

Անցեալ օրեր Նով. վրէժիսա-
թերթը հայոց մասին խօսելով
կըսէր, «Սուլթանը յայտագրով մը
հայ ժողովրդէն խնդրեց որ կա-
տարեալ հանդարտութիւն պահեն
Գերման կայսեր Պոլիս եկած մի-
ջոցին, այս յայտարարութիւն հա-
յոց մէջ մեծ տպաւորութիւն թո-
ղուց»:

«Ամենքէն ի վեր թուրք կառա-
վարութիւնը դեռ պահանջէ կը
ծածկէ հայ շրջաններուն մէջ կա-
տարուածները, եւ կառավարութիւ-
նը իրեն ուղղուած հարցումներուն
միշտ կը պատասխանէ թէ՛ ամեն
ինչ անդորր վիճակի մէջ է: Մինչ-
դեռ հայերը կըսէ Նով. վրէժիսա-
մեր առած տեղեկութեանց նայե-
լով, բաւական չեն խնդրեցած եւ
կը շարունակեն իրենց շարժում-
ները: Կը յաւելու, Գեկերեան եւ
վետուրեան Ամերիկայ ճամբորդե-
լով դրամ հաւաքած են, Պիւլպիւ-
եանն ալ, որ հայկական շարժմանց
պարագլուխներէն է ու մեծ ժո-
ղովրդականութիւն ունի, լծնտօ-
նի մէջ դրամ կը հաւաքէ: Հայ
յեղափոխականները Լոնտօնի Գառ-
միիթ-Գրիլիպի մէջ մեծ միթինկ
մը ընելով, գործելու ծրագիր կազ-
մեցին: Վերջապէս հայոց մտադ-
րութիւնը խաղաղասիրական չէ եւ
թուրք կառավարութիւնն ալ շատ
լաւ հասկցած է թէ կարծեցեալ
անդորրութիւնը ամեն վայրկեան
կարելի է փոթորիկի վերածուիլ»:

Ռուս թերթը Պոլսոյ մէջ հայե-
րու մասնակցութեամբ նոր խոս-
վութիւններ ծագած ըլլալու լուր
մը առնելով, կըսէ թէ «Կասկած
չի կայ որ նոր ընդհարումները նը-
շանաւոր կնճռոտութիւններ առաջ
կը բերեն, եւ հայկական խրդիրը,
կրէտէի վերջին զէպքերուն նման
օրուան խնդիր կը դառնայ: Այս
անհաճոյ կնճռոտները, հաւանական
չէ որ այն լուծումները ստանան
ինչ որ կ. Պոլսոյ հայոց նշանաւոր

կոտորածի խնդիրը ստացաւ»:

«Կալկազ» թերթն ալ Նով.
վրէժի այս հատուածը արտատ-
պելով իր կողմէ կը յաւելու. «Կու-
գայ ժամանակ, յորում Ռուսիա
եւ Թուրքիա բնական դաշնակիցներ
կը հանդիսանան. արդարեւ այս
երկու պետութիւններն արտաքին,
մասամբ ալ ներքին ընդհանուր
թշնամիներ ունին, որոնց դէմ մի-
ասին կռուիլ դիւրին է: Ուստի,
ւորապէս Թուրքիոյ բազմաշար-
շար հայերու խնդիրը մարդասի-
րական եւ քաղաքական խոհմէլու-
ծումի մը հասցնելու համար երկու
պետութիւններու միահամուռ ջան-
քը հարկաւոր է»:

Կալկազ թերթը խորհուրդ տա-
լով հայոց կըսէ՝ «Հայերը վաճա-
ռական ժողովուրդ են եւ այդ զօ-
րութեամբ ալ Թուրքիան իրենց
կը պատկանի. ուստի, պէտք է
հանդարտ նստին եւ վայելեն իրենց
ճարպիկութեան պտուղները»:

Կալկազի խմբագիրը եթէ ակ-
նոցը քիչ ինչ վրայ քիչ մը աւելի
շիտակ դնէր. պիտի տեսնէր թէ
Հայերը արդէն ըստ ամենայնի
հանդարտ ժողովուրդ մը են. բայց
թուրք կառավարութիւնն է որ կը
վրդովէ անոնց հանդարտութիւնը,
զրկելով զիրենք մարդկային տա-
րական իրաւունքներէ:

ՌՈՒՏԱՒՈՐ ԿԱՅՍՐԸ

Արմենիի այս խորագրով մէկ
խմբագրականէն կը քաղենք հե-
տեւեալ մասերը:

Թուրքիոյ մէջ կայ քրիստոնե-
այ փոքրամասնութիւն մը եւ միւս-
լիման մեծամասնութիւն մը, եւ
մինչեւ հիմայ գերմանական քա-
ղաքականութիւնը քրիստոնեայ
փոքրամասնութեան փաստկար,
իսկ միւսլիման մեծամասնութեան
անօգուտ եղաւ:

Սուրբ Տեղեաց քրիստոնեաները
գերմանական պաշտպանութիւն
պիտի նախընտրեն Ֆրանսայի եւ
իր դաշնակից Ռուսիոյ պաշտպա-
նութիւնը, որովհետեւ Ռուսիա եւ
Ֆրանսա գիտեն պաշտպանել, երբ
պաշտպանութիւն մը կը ստանձ-
նեն:

